# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի առաջին մասի 6–րդ կետի բ ենթակետի պահանջները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության որոշեց.

«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՀ/2024/Ա-26 ծածկագրով կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 15.03.2024 թվականին վերջինիս տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկում կատարելու համար, որը «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել: Ելնելով վերոգրյալից՝ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման:

**Պատվիրատուի ղեկավար՝**

**Ա. Ֆիդանյան**

«25» «03» 2024թ.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ | 00524412 | Ք.Երևան,Երկ աթուղայիններ 4փ 2/4, | **Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի բ ենթակետի պահանջները ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՀ/2024/Ա-26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման, քանի որ վերջինս կողմից ներկայացված 2-րդ (CPV-39831243/502 լվացքի փոշի ավտոմատ), 3-րդ (CPV-39831242/502 լվացքի փոշի ձեռքով լվանալու համար), 4-րդ (CPV-39831100/505 լվացող նյութեր), 6-րդ (CPV-39831245/504 օճառ, հեղուկ) չափաբաժինների համար ներկայացված, հրավերով պահանջվող փաստաթղթերում հստակեցված չէ ապրանքների ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, արտադրողների անվանումները և տեխնիկական բնութագրերը:** | | | ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԿՀ/2024/Ա-26 Պատվիրատուի ղեկավարի «22»«03»2024թ. որոշման համաձայն |